ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հոկտեմբերի 05-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/51»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար ցանցային բաժանարարների և դյուրակիր համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/51» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 02.10.2020թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 05.10.2020թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

«Մեր նախորդ պարզաբանման հարցման մեջ բարձրացված հարցը առաջանում է՝ ելնելով համաշխարհային տնտեսության մեջ առկա իրավիճակից: Պատվիրատուն մատակարարման ժամկետ սահմանելիս պետք է հաշվի առնի նշված իրավիճակը նույնպես: Մեր հարցման մեջ կա նաև հրավերով նմանատիպ իրավիճակից դուրս գալու համար նախատեսված ելքին հղում: Իսկ ներկայացված պարզբանման մեջ ոչ մի հույս չի թողնվում պայմանագրի նախագծում ժամկետի երկարացման վերաբերյալ դրույթից օգվելու հնարավորության համար: Ավելին, հիշեցվում է նաև հնարավոր պատասխանատվության մասին: Տպավորություն է ստացվում, որ Պատվիրատուի համար պակաս կարևոր չէ "սեփական տեսակետը ունեցող" մասնակիցներին "պատժելը": Սույն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան դյուրակիր համակարգիչներ Պատվիրատուն արդեն ձեռք բերած կլիներ, եթե նույն դյուրակիր համակարգիչների ձեռք բերման հունիս ամսվա գնման ընթացակարգին առաջարկված ընթացիկ հրավերի բնութագրերով դյուրակիր համակարգիչները ընդուներ որպես պահանջներին բավարարող (իրականում գերազանցող) դյուրակիր համակարգիչներ:»

Պարզաբանում

Ներկայացված հարցման վերաբերյալ պարզաբանում տրամադրվել է 2020թ. հոկտեմբերի 02-ին (պարզաբանումը հրապարակված է www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում և էլեկտրոնային գնումների Armeps համակարգում), իսկ քննարկվող գնման ընթացակարգի հրավերի շրջանակից դուրս բարձրացված հարցերը դիտարկման ենթակա չեն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/51» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/51» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: